

























































































































































































































































— Մի ծրար ունիմ ձեզ հանձնելու, օրհորդ, — պատասխանեց ծառան, և թևի տակ բռնած տետրակի միջից հանելով ծրարը հանձնեց օրհորդին:

— Այս ումնի՞ ց է, հոգաբարձությունի՞ ց:

— Այո՛, օրհորդ, բարեհաճեցեք ստացումը ստորագրել: Աստղիկը ներս տարավ տետրակը, ծրարի ստացումը ստորագրեց և տետրակը սպասավորին հանձնելով, կրկին վերադարձավ յուր սենյակը: Այս անգամ նա մի փոքր սթափվել էր: «Արձակուրդների ժամանակը լրացավ, հոգաբարձուները երևի մեր պարտավորությունն են հիշեցնում մեզ».

— մտածեց օրհորդը և ծրարը բացավ: Բայց մի քանի տող կարդաց թե չէ, գույնը նետեց, ծնկները դողացին և նա թուլացած ընկավ աթոռի վերա: Հոգաբարձությունը գրում էր օրհորդին հետևյալը.

«Ազնիվ օրհորդ.

Ձեր արժանիքը մենք միշտ գնահատել ենք և երբեք չենք կարող ուրանալ այդ, որովհետև մեր դպրոցի համար դուք շատ եք աշխատել և անձնվիրությամբ էլ ծառայել եք նրան: Դուք արժանի եք ամեն հարգանքի: Բայց ձեզ հայտնի հանգամանքի պատճառով քաղաքում շատ են խոսում ձեր մասին: Մենք, իհարկե, ոչ մի գրպարտության հավատալ տրամադիր չենք, բայց ստիպված ենք դպրոցի օգտի համար խնդրել ձեզ, որ բարեհաճեք ներկայացնել ձեր հրաժարականը, ըստ որում ծնողներից շատերը որոշել են իրենց աղջկերանց դպրոց չուղարկել, եթե դուք այստեղ պաշտոն կունենաք: Հույս ունինք մեր խնդիրը ձեզ չի վշտացնիլ, որովհետև մենք ականա ենք առաջարկում նրան»:

Մի քանի րոպե գրեթե անզգայացած դրության մեջ մնալով օրհորդը կրկին ձեռքն առավ հոգաբարձության գրությունը և սկսեց մտադրությամբ կարդալ նրան: Երբ ընթերցումը ավարտեց, նա վեր կացավ աթոռից, դեն ձգեց գրությունը և վճռական ձայնով բացականչեց.

— «Ժամանակը հասավ, էլ ավելորդ է ապրել, սա է վերջին հարվածը, որ հասցնում է ինձ անիրավ ճակատագիրը. ես չեմ կարող նրա դեմ կռվել, ես մի թույլ, անօգնական կին եմ, իմ դժբախտ մահը թող բողոքե այսուհետև անարդար բռնության դեմ:

Եվ նա շտապով դիմեց դեպի մոր պահարանը, բացավ նրան և ուշադրությամբ սկսավ քրքրել մի փոքրիկ գրոց: Երկար պտրտելուց ետ վերջապես նա հանեց այնտեղից մի փոքրիկ փաթեթ և մի առանձին ուրախությամբ սեղմելով նրան յուր ձեռքի մեջ, դիմեց դեպի յուր առանձնարանը:

Բայց ո՛ր գնաց Պետրոսը:

Աստղիկի հուսահատ դրությունը վերջապես ճնշեց նրա համառությունը, նա որոշեց դիմել յուր հորեղբորը և օգնություն խնդրել նրանից:

Թովմասը դահլիճի մեջ միայնակ անցուդարձ էր անում, երբ ներս մտավ Պետրոսը:

Երիտասարդի երևալը մի հանկարծական ուրախություն պատճառեց հորեղբորը:

— Պետրե, սիրելի որդի, վերջապես դու հիշեցիր ինձ, — բացականչելով Թովմասը դիմեց դեպի եղբորորդին և ջերմությամբ գրկեց նրան:

Պետրոսը զգացվեցավ հորեղբոր սրտազին ընդունելությամբ և սիրով համբուրվեցավ նրա հետ:

— Ի՞նչպես պատահեց այս, Պետրե, որ դու հիշեցիր քո հորեղբորը, — հարցրեց Թովմասը եղբորորդուն, նստեցնելով նրան յուր կողքին:

— Կարիքը ստիպեց ինձ ձեզ դիմելու, — անկեղծությամբ պատասխանեց Պետրոսը:

— Իմ բոլոր կարողությունը քոնն է, որդի, քանի որ դու եկել ես ինձ մոտ, ես էլ ոչինչ ցավ չունիմ. ասա ինձ, ինչով կարող եմ ես օգնել քեզ:

Պետրոսը պատմեց հորեղբորը յուր երկրորդ դժբախտության մանրամասն պատմությունը սկսած այն օրից, որ նա թողեց հորեղբոր տունը մինչև այն րոպեն, որ նա կրկին ներս մտավ այդ տան



դռնով:

— Պետրե, Պետրե, դու այդպիսի ցավ ես ունեցել և հորեղբորդ չե՞ս հայտնել. — զգացված բացականչեց Թովմասը, — միթե ես այնքան անգութ կլինեի, որ մերժեի քեզ այդ չնչին գումարը, հապա ում համար եմ ես պահում իմ հարստությունը:

— Ներիր, հորեղբայր, այժմ էլ իմ նեղ դրությունն է ստիպել ինձ, որ մի անգամ քո հրամանով այս տանից արտաքսվելուց ետ ես դարձյալ դիմել եմ ձեզ...

— Իրավունք ունիս, որդի, իրավունք ունիս, ես մի անիծված մարդ եմ, բայց և այնպես դու պիտի ներես քո հորեղբորը. նրա սիրտը այնքան էլ անողորմ չէ, որքան երևում է... Բայց ինչ որ է, դու շտապիր այսօր նեթ քո պսակի հրամանագիրը առնելու, ես խղճում եմ այն օրհորդին, նա պատվական աղջիկ է: — Այս ասելով նա բռնեց Պետրոսի ձեռքից, տարավ նրան յուր առանձնարանը, և բանալով մեծ, երկաթյա պահարանը, հանեց նրա միջից տասը հատ նոր հարյուրանոցներ և տալով Պետրոսին ասաց.

— Վճարիր, ում որ հարկավոր է: Գործը վերջացնելուցդ ետ վերադարձիր այստեղ Հռիփսիմեի հետ: Վաղվանից հարկավոր պատրաստությունը կտեսնեմ, և իմ ու քո անվան վայել հարսանիք կանեմ ձեզ համար:

Պետրոսը ջերմաջերմ համբուրեց հորեղբոր ձեռքը և բյուր շնորհակալություններ անելով, հազար ռուբլու հետ միասին դուրս թռավ փողոց:

Նա գտավ բարեկարգչին հոգևոր ատյանում, կանչեց նրան մի ծածուկ անկյուն և հանձնելով նրան տասը հարյուրանոցները, ասաց նրան:

— «Ես սպասում եմ այստեղ, մինչև մի ժամը պատրաստիր պսակի հրամանագիրը և հանձնիր ինձ»:

— «Մինչև կես ժամը պատրաստ կլինի», — ասաց նա խորհրդավոր ձայնով և ներս մտավ ատյանը:

Հազիվ Պետրոսը մի քանի անց ու դարձ էր արել առաջնորդարանի պարտիզում, և մի քանի ծրագիրներ կազմել հարսանիքի համար, և ահա բարեկարգիչը մոտեցավ նրան, հանձնեց երիտասարդին պսակի հրամանագիրը և սեղմելով նրա ձեռքը, շնորհավորեց նրա բախտավորությունը:

— «Վերջապես...» — բացականչեց երիտասարդը և հրամանագիրը մի անգամ կարդալուց ետ դրավ ծոցի մեջ և շտապ-շտապ քայլերով դիմեց Աստղիկի մոտ:

Բայց որքա՛ն մեծ եղավ նրա սարսափն ու հուսահատությունը, երբ նա յուր սիրուհուն գտավ մահճի մեջ պառկած, նրան շրջապատել էին դժբախտ մայրերն ու դրացուհիները: Հրավիրված բժիշկը հուսահատ կանգնած էր մի անկյունում, գեղեցիկ Աստղիկը մահվան տագնապի մեջ էր»:

— Աստղիկ, այդ ինչ արի՞ր դու, ես մեր պսակի հրամանագիրն եմ բերել, իսկ դու...

— Պսակի... հրամանագի՞րը... արդեն ուշ է... Պետրե, շատ ուշ է... — մահվան ժպիտով շշնջաց օրհորդը և գլուխը կքեց...

Թշվառ աղջիկը թունավորել էր իրեն մկնդեղով, երկու ժամից ետ նա հոգին ավանդեց...—